ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ՝ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մովսես Խորենացին, անդրադառնալով Պարթևական պետության պատմության, մի շարք դրվագներ կապում է «Արշակ Մեծի» և «Արշակ Քաջի» հետ։

Պարթևական թագավորության հիմնադիրը, ինչպես հայտնի է, Արշակ I-ն էր[1]*, որի գահակալման մասին Խորենացին գրում է. «ԶԱրշակ Մեծ, արքայ... Պարթևաց, որ և աղգաւ իսկ Պարթև, ապստամբեալ ասեն ի Մակեդոնացւոց*[2] *և թագաւորեալ...»*[3]*։ Խորենացին, ի թիվս մի քանի սելևկյան թագավորների խոսելով Անտիոքոս Թեոսի մասին, հաղորդում է Արշակի գահակալման տարեթիվը։ Ըստ Խորենացու, Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից (մ. թ. ա. 323 թ. հունիսի 13) հետո «թագաւորեաց Բաբելովնի Սելևկիոս»*[4]*։*

Սելևկյան տոմարի սկիզբը ընդունված է համարել մ. թ. ա. 312 թ.։ Գ. Սարգսյանը, հետևելով V. Grumel-*ին*[5]*, այդ թվականի վրա ընկնող ամիսների սակավաթվության (3 ամիս) պատճառով ավելի դյուրին է համարում Սելևկյան տոմարը հաշվել մ. թ. ա. 311 թ. սկզբից*[6]*։*

Սելևկոսը «տիրեալ,— գրում է Խորենացին,— ամս երեսուն և մի՝ թողու զթագաւորութիւն որդոյ իւրում Անտիոքայ, անուանեցելոյն Սատէր, ամս ինն և տասն»[7]*։ Նշված ժամանակահատվածները համապատասխանում են գիտության մեջ ընդունված տարեթվերին՝ Սելևկոս I՝ մ. թ. ա. 311—280 թթ., Անտիոքոս I՝ մ. թ. ա. 280—261 թթ.։ Խորենացին շարունակում է. «Զսա հաջորդէ Անտիոքոս, ասացեալն Թեւոս, ամս տասն. և ի մետասաներորդին*

---

1 *Արշակ I-ը թագավոր հռչակվեց Ասաակում։ Պարթևական էրայի առաջին տարին է մ. թ. ա. 247 թ.* (P. Ф р а й, Наследие Ирана, М., 1972, *էջ 367)։ Մ. թ. ա. 239 թ. պառները ջախջախեցին Սելևկյաններից իրեն անկախ հայտարարած (մ. թ. ա. 245 թ.) Պարթիենեի սատրապ Անդրագորասին և գրավեցին այդ շրջանը։ Պառները պարթևներին ցեղակից էին, որոնց հետ և աստիճանաբար ձուլվեցին։ Մ. թ. ա. 232—231 թթ. Սելևկոս II-ը արշավանք ձեռնարկեց Արևելյան Իրան՝ անջատված տերիտորիաները ետ գրավելու։ Մի շարք պատճառներով Սելևկյանները հաջողության չեն հասնում, և Սելևկոս II-ը ստիպված է լինում վերադառնալ Անտիոք, սակայն մինչ վերադարձը նա բանակցություններ է վարում Արշակի հետ և նրան վասալական իրավունքներով Պարթևքի և Հիրկանայի տեր է ճանաչում, մտածելով, ինչպես ենթադրում է Մ. Մ. Դյակոնովը, նրա հետ հաշվեհարդար տեսնել հետագայում* (М. М. Дьяконов, Очерк истории Ирана, М., 1961, *էջ 181—182*)։ *Այսպիսով, Սելևկյանները այս ժամանակահատվածում պաշտոնապես ճանաչեցին Պարթևական թագավորությունը։*

2 *Նկատի ունի Սելևկյաններին։*

3 *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, Ա, ը, էջ 28։*

4 *Նույն տեղում, Բ, ա, էջ 102։*

5 V. G r u m e l, Traité d'études byzantines. I. La chronologie, P., 1958, *էջ 209։*

6 *Գ. Խ. Ս ա ր գ ս յ ա ն, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 15։*

7 *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ա, էջ 102։*

ապստամբեն Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոցն։ Ուստի և թագաւորեաց Արշակ Քաջ...»[8]։

Թեոսի թագավորելու տևողության տասը տարվա մասին եղած հաղորդումը առաջին հայացքից կարող է թվալ գրչական վրիպակի արդյունք [«ամս՝ Ժ»-ի կողքին եղել է Ե, այսինքն ԺԵ («հնգետասան») ինչպես Եվսեբիոս Կեսարացու (մոտ 263—340) աշխատությունում է][9]։ Սակայն Խորենացու տեքստի այդ հատվածի բանասիրական քննությունը առայժմ այդպիսի ենթադրության հնարավորություն չի ընձեռում։ Գ. Սարգսյանը իրավացիորեն նշում է. «Խորենացին պետք է գիտենար (Եվսեբիոս Կեսարացուց), որ Անտիոքոս Թեոսը իշխել է տասից ավելի տարիներ»[10]։ Ուրեմն պետք է կարծել, որ Խորենացուն հետաքրքրել է միայն Թեոսի գահակալման 11-րդ տարին (որը, բնականորեն, հաջորդում է 10-ին), երբ տեղի ունեցավ Պարթևական պետության հիմնադրումը։ Այնպես որ, ինչպես ընդունված է, Անտիոքոս Թեոսի գահակալման տարիներն էին մ. թ. ա. 261—246 թթ., ուրեմն 11-րդ տարին էր մ. թ. ա. 250 թ., որը և Խորենացին համարում է «Արշակ Քաջի» (իմա՝ Արշակ I-ի) գահակալման տարին։ Վերջինս «տիրեալ ամս երեսուն և մի»[11], այսինքն մինչև մ. թ. ա. 219 թ., որը մոտ է Մ. Դյակոնովի կողմից ընդունվող տարեթվին (մ. թ. ա. 217 թ.)[12]։

Երկրորդ գրքի Բ գլխում Խորենացին, նորից անդրադառնալով Պարթևական թագավորության հիմնադրմանը, գրում է. «Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ»[13]։ Նշված վաթսուն տարիները համընկնում են նրա՝ վերը բերված սելևկյան թագավորների գահակալման տարիների ընդհանուր թվի հետ, եթե նկատի ունենանք մինչև Անտիոքոս Թեոսի գահակալման 11-րդ տարին (սելևկյան տոմարի 61-րդ տարի), որը համապատասխանում է «Ամք Աբրահամի 1766»[14] (մ. թ. ա. 250 թ.), քանի որ «Ամք Աբրահամի 2016»[15] (մ. թ. 1 թ.)։

Ինչ վերաբերում է Ալեքսանդրին, ապա խոսքը կարող է լինել միայն Ալեքսանդր Մակեդոնացու մասին։ Եվսեբիոս Կեսարացին նշում է, որ «Աղեքսանդրոս ԼԲ ամաց եղեալ վախճանեցաւ ի Բաբէղոն»[16]։ Ապա, խոսելով Ալեքսանդրի դիադոխների միջև ծագած պատերազմների[17], Պտղոմեոս Լագոսի, Արիդէսի, Պարդայի (Պերդիկա), Մէնանդրոսի, Թէոփիրաստոսի հետ կապված և մի շարք այլ անցքերի մասին, որոնք ընդգրկում էին 12 տարի, շարունակում է. «Ասորւոց և Բաբէղոնի և վերնոյ կողմանցն թագաւորեաց Սեղևկոս

---

8 Նույն տեղում։ Հմմտ. «Պարթևք ի Մակեդոնացւոց ապստամբեցին. և ի նոցանէ թագաւորեաց Արշակ. ուստի և Արշակունիք» («Նուսերի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակագրք երկմասնեաց», հատ. 2, Վենետիկ, 1818, էջ 130)։

9 Եվսեբիոս Կեսարացի, հատ. 1, էջ 170, հատ. 2, էջ 131։ Տե՛ս նաև՝ Միքայել Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 137։

10 Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 22։

11 Մովսես Խորենացի, Բ, բ, էջ 103։

12 М. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 182։

13 Մովսես Խորենացի, Բ, բ, էջ 102։

14 Եվսեբիոս Կեսարացի, հատ. 2, էջ 131։

15 Նույն տեղում, էջ 146—147։

16 Նույն տեղում, էջ 126—127։

17 Նույն տեղում. «Մակեդոնացւոց իշխանք ընդ միմեանս անկանէ»։

Նիկանովը»[18]։ Այնպես որ, ըստ Եվսեբիոսի, Ալեքսանդր Մակեդոնացու մահվան («Ամք Աբրահամի 1693»[19]) և Սելևկիոս Նիկատորի գահակալման («Ամք Աբրահամի 1705»)[20] միջև ընկած է 12 տարի։

Թերևս Խորենացին ծանոթ է եղել Եվսեբիոսի աշխատության այս հատվածում նշված փաստերին, սակայն հարկ չի համարել դրանց մասին խոսել։ Գ. Սարգսյանի մանրամասն հետազոտությունը ցույց է տալիս, որ Խորենացին, ամենայն հավանականությամբ, այստեղ նշել է սելևկյան էրան (312/311), որի ամենատարածված անվանումներից մեկը Արևելքում՝ ասորիների, պարսիկների, արաբների ու այլ ժողովուրդների մոտ, կապված է եղել Աղեքսանդր Մակեդոնացու (Իսքանդարի, Երկեղջյուրի) անվան հետ[21]։

Անհրաժեշտ ենք դտնում նշել նաև, որ Խորենացին, ըստ երևույթին, ուղղակի նախընտրել է խոսել Ալեքսանդրի ժառանգության արևելյան երկրամասերի՝ Սելևկյանների պետության մասին, որի պատմությունը անմիջականորեն կապվելու էր Պարթևաստանի և Հայաստանի պատմության հետ։

Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ Արշակի գահակալումը, ըստ Մովսես Խորենացու, ինչպես նաև ճիշտ նշում է Գ. Սարգսյանը, համապատասխանում է մ. թ. ա. 250 թ.[22], որը գիտության մեջ հայտնված կարծիքներին չի հակասում։

Այսպիսով, ակնհայտ է, որ վերը հիշատակվող «Արշակ Մեծը» և «Արշակ Քաջը» նույն ինքը՝ Արշակ I-ն է՝ Պարթևական թագավորության հիմնադիրը։

Հաջորդ հատվածում Խորենացին գրում է. «Արշակ Քաջ... տայ պատերազմունս սաստիկս յոյժ, թափելով յինքն զամենայն արևելեայս։ Հալածէ և ի Բաբելովնէ զՄակեդոնացւոց իշխանութիւնն։ Լսէ և զզորանալն Հռովմայեցւոց ի վերայ ամենայն արևմտից և ծովու, և թէ ի Սպանիացւոց թափեցին զբովսն, ուստի ոսկի և արծաթն հատանի. և զ՞ռաղատացիս հարեալ ընդ հարկաւ արարին, և զթագաւորութիւնն Ասիացւոց։ Հրեշտակս առաքեալ խնդրէր զդաշնաւորութիւն, զի մի օգնեսցեն Մակեդոնացւոց. ոչ տալով հարկս, այլ պատարագս միայն ամի ամի հարիւր քանքարոյ։ ...Արշակ, որ կոչեցաւ Մեծ. պատերազմի ընդ Դեմետրեայ և որդւոյն Դեմետրեայ Անտիգոնեայ. քանզի ի վերայ նորա եկն ի Բաբելովն մակեդոնական զօրու, և պատերազմեալ՝ ի գերութիւն ըմբռնեցաւ. զոր կալեալ Արշակայ՝ տարաւ ի Պարթևս հանդերձ երկաթեղէն կապանօք, ուստի և Սիրիպինդէսն կոչեցաւ»[23]։ Այստեղ արդեն խոսքը այլ պարթևական թագավորի՝ Միհրդատ I-ի (մ. թ. ա. 171—138) մասին է[24]։ Հայտնի է, որ նա Տիգրիսի վրայի Սելևկիան գրավեց մ. թ. ա. 141 թ. ամռանը։

18 Նույն տեղում, էջ 128—129։

19 Նույն տեղում, էջ 126—127։

20 Նույն տեղում, էջ 128—129։

21 Գ. Խ. Սարգսյան, «Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգի մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1968, N 1, էջ 136—138։

22 Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 69։

23 Մովսես Խորենացի, Բ, բ, էջ 102—103։ Հմմտ. Եվսեբիոս Կեսարացի, հատ. 1, էջ 166։

24 Մ. Էմինը նշում է, որ Սեն-Մարտենի կարծիքով «Արշակ անունը պարթևական թագավորների ընդհանուր անվանումն էր, որոնք, բացի դրանից, սովորաբար նաև այլ անուն էին կրում։ Նա ենթադրում է, որ պարթևական դինաստիայի հիմնադիր Արշակը նույն ինքը՝ Միհրդատ I-ն է, ասորական (սիրիական) թագավոր Դեմետրեոս Նիկատորի հաղթողը։ Մովսես Խորենացին և նրա հետևորդները՝ այլ հայ պատմիչները, այդ թագավորին անվանում են Ար-

Վ. Տառնը ենթադրում է, որ Դեմետրիոս II Նիկատորը (մ. թ. ա. 146—125 թթ.) և Հելիոկլես Բակտրիացին ռազմական դաշինք են կնքում (այդ կարելի է կռահել Հուստինոսի մի հաղորդումից)[25], որպեսզի Միհրդատ I-ին ստիպեն պայքարելու երկու ճակատով: Ըստ նրա, Միհրդատը Հելիոկլեսին ջախջախեց մ. թ. ա. 141 թ. ձմռանը, իսկ ապա, մ. թ. ա. 140 թ. կամ 139 թ. վերադառնալով Բաբելոն, ջախջախում և գերի է վերցնում Դեմետրիոս II Նիկատորին[26]։ Այդ հաղթանակից հետո Միհրդատ I-ը, ինչպես նշում է Ռ. Ֆրայը, «իրեն կարող էր դիտել Աքեմենյանների և Ալեքսանդրի ժառանգորդ»[27]։

Եթե ճիշտ է Վ. Տառնի ենթադրությունը Դեմետրիոս II Նիկատորի և Հելիոկլես Բակտրիացու միջև եղած ռազմական դաշինքի մասին, ապա Միհրդատ I-ի հաղթանակը երկու ճակատներում, թերևս, Հռոմին սիրաշահելու արդյունք էր[28]:

Խորենացին նշում է, որ պարթևական թագավորը ոչ թե հարկ, այլ նվերներ է խոստանում Հռոմին, որպեսզի վերջինս չօգնի Սելևկյաններին։ Այդ ոչ այնքան կախվածության կամ էլ դաշինքի արտահայտություն էր, որքան կաշառքի, որը Հռոմի քաղաքական դոկտրինան էր դարձել։ Կարծում ենք, որ Խորենացին մ. թ. ա. II դարի կեսերին վերաբերող հռոմեա-պարթևական դիվանագիտական հարաբերությունների եզակի փաստ է բերում։

շակ Մեծ» (Н. Эмин, История Армении Моисея Хоренского, М., 1893, էջ 223, ծան. 29)։ Այս տեսակետը, որի հետ, ինչպես երևում է, համաձայն էր Մ. Էմինը, իրանագիտության XIX դարի մակարդակի արդյունք էր։ Ի դեպ, պարթևական դրամների վրա, որոշ բացառությամբ [օրինակ՝ Գոտարզ II-ի (40—51 թթ.) անունը (տե՛ս К. В. Голенко, А. М. Раджабли, Али-Байрамлинский клад и некоторые вопросы обращения парфянских монет в Закавказье. «Вестник древней истории», 1975. № 2, էջ 72—73)], հիմնականում հանդիպում է Արշակ անունը։

25 Տե՛ս Юстин, Эпитома сочинения Помпея Трога «Historiae Philippicae». XXXVI, I, 4. «Вестник древней истории», 1955, № 1, էջ 199։

26 W. W. Tarn, The Greeks in Bactria and India, Cambridge, 1951, էջ 273։ (Տե՛ս Р. Фрай, նշվ. աշխ., էջ 251, հմմտ. М. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 188)։ Ինչպես ճիշտ նշում է Ստ. Մալխասյանը, Խորենացու մոտ Դեմետրիոսի Սիդերիտես անվանումը աղավաղված է տրված: Նա առաջարկում է ուղղել Սիտիրիտես, որ հունարեն նշանակում է երկաթյա (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 377, ծան. 72)։ Ավելի ճիշտ ձևն է «Սիդերիտես» -հուն. σιδηρίτης։ (Տե՛ս Greek-English Lexicon compiled by G. Liddell and R. Scott, Oxford, հատ. II, 1951, էջ 1597)։

27 Р. Фрай, նշվ. աշխ., էջ 251:

28 Սելևկիայում մ. թ. ա. 139 և 138 թթ. կտրված դրամների վրա առաջին անգամ հայտնվում է ΦΙΛΕΛΛΗΝΟΣ բառը. ինչպես ենթադրում է Գ. Կոշելենկոն, դա արվել էր Միջագետքի հույն բնակչությունը սիրաշահելու համար (Г. А. Кошеленко, Монетное дело Парфии при Митридате I, ИА АН СССР, сб. «Нумизматика и эпиграфика», 1972, № 10, էջ 99, հմմտ. G. Rawlinson, Parthia, London, 1893 էջ 82)։ Համաձայն լինելով այդ ենթադրությանը, կցանկանայինք նշել՝ արդյոք այդ դրամները կտրելը չէ՞ր արտահայտում նաև Միհրդատ Ա-ի վերաբերմունքը Հռոմի կողմից ցույց տրված ինչ-որ օգնության հանդեպ։ Այս դեպքում, կարծում ենք, որ Հռոմեական հանրապետության և Պարթևական թագավորության միջև եղած հարաբերությունների վաղ շրջանում, հռոմեական քաղաքականությունը պարթևների կողմից ավանդաբար կարող էր ընկալվել որպես հելլենական և «հելլենասեր», կարող էր նշանակել «հռոմեասեր»։ Ինչպես օրինակ, մ. թ. 1 դարում Պարթևական պետությունում ծագած դահակալական պայքարում արևմտյան շրջանների՝ Միջագետքի բնակչությունը, որը հռոմեական կողմնորոշում ուներ, հարել էր «հելլենասեր» Ոնոնին (տե՛ս Р. Фрай, նշվ. աշխ., էջ 258, К. В. Голенко, А. М. Раджабли, նշվ. աշխ., էջ 80—81)։

Խորենացու հաղորդած փաստերը ժամանակագրական տեսակետից սիստեմավորելուց հետո «Հայոց պատմության» շարադրանքը հաջորդական բոնույթ է ստանում։ Այսպես՝ պարթևական թագավորության հիմնադրման մասին տեղեկություններ հաղորդելուց հետո նա խոսում է Հռոմի՝ Իսպանիայում վարած քաղաքականության մասին։ Հռոմը իր նվաճողական քաղաքականությունը Իսպանիայում սկսել էր դեռևս մ. թ. ա. III դարի վերջին տասնամյակներում։ «Մ. թ. ա. 218—206 թթ. հռոմեական ռազմական քաղաքականության և դիվանագիտության սուր ծայրը,— գրում է Ա. Վ. Միշուլինը,— ուղղված էր Իսպանիայում կարթագենյան տերության կործանմանը. կարթագենացիների՝ իբերական ցեղերի վրա ունեցած իշխանության ոչնչացմանը»[29]։ Մ. թ. ա. 197 թ. օրենքի համաձայն Իսպանիան բաժանվում էր երկու պրովինցիայի՝ «Մոտակա» (Hispania Citerior) և «Հեռավոր» (Hispania Ulterior), սակայն այդ օրենքը հաստատում էր արդեն գոյություն ունեցող հարաբերությունները, քանի որ այդ բաժանման մասին եղած Լիվիոսի հաղորդումը, ինչպես նշում է Ա. Միշուլինը, վերաբերում է մ. թ. ա. 199 թ., երբ Իսպանիա են ուղարկվում երկու պրոկոնսուլ՝ Գնեյոս Կորնելիոս Բլազիոնը և Լուցիոս Ստերտինիոսը[30]։ Մ. թ. ա. 197 թ. Իսպանիայում ապստամբություն է բռնկվում, որը ճնշելու համար մ. թ. ա. 195 թ. բանակ է ուղարկվում կոնսուլ Մարկոս Պորցիոս Կատոնի (Ավագ, մ. թ. ա. 234—149) գլխավորությամբ. ապստամբությունը ճնշելուց հետո կոնսուլը բարձր հարկեր է նշանակում արծաթի և երկաթի հանքերի (Խորենացու «բովք»-ը)[31] վրա։ «Կարելի է ենթադրել,— գրում է Ա. Միշուլինը,— որ ոսկու և արծաթի որոշ հանքեր հանձնվել էին պետությանը»[32]։ Եվ ապա եզրակացնում է. «Հանքերում արտադրության ամբողջ կազմակերպումը երկու խնդիր էր հետապնդում, որոնց կատարման համար և կիրառվում էր հռոմեական վարչակարգի մամլիչը Իսպանիայում։ Առաջին հերթին անհրաժեշտ էր ապահովել դրամի հոսքը հարկերը վճարելու համար և երկրորդ՝ անհրաժեշտ էր ստանալ առավելագույն բանակությամբ ձուլակտորներ, որոնք մշակվում էին հռոմեական ադմինիստրացիայի անմիջական հսկողության տակ»[33]։ Այս և հռոմեական իրավունքի արմատավորումը Իսպանիայում Ա. Միշուլինը դիտում է որպես Հռոմի վարչական քաղաքականության դրսևորում, «որը Իսպանիայում պրովինցիալ դարաշրջան բացեց»[34]։

Կարծում ենք, որ խոսելով հռոմեացիների զորեղացման մասին «ի վերայ

---

29 А. В. Мишулин, Античная Испания. М., 1952, էջ 326։

30 Նույն տեղում, էջ 331, Liv., XXXIII, 27, 1.

31 А. В. Мишулин, նշվ. աշխ., էջ 345, Liv., XXXIV, 27, 7. Հատկանշական է, որ իսպանական համայնքները, ի տարբերություն Հռոմին հպատակ այլ երկրների, իրավունք ունեին բացի պղնձե և բրոնզե դրամներից նաև արծաթե դրամներ կտրել, որը Ա. Միշուլինը բացատրում է նրանով, որ իսպանացիները ոչ թե որոշ արտոնություններ ունեին, այլ նրանով, որ Իսպանիան հարուստ էր արծաթով (А. В. Мишулин, О возникновении римского провинциального управления в Испании, «Вестник древней истории», 1949, № 1, էջ 48)։

32 А. В. Мишулин, Античная Испания, էջ 345։ Հանքերի հետ կապված հարցերի մասին խոսվում է էջ 341—346։

33 Նույն տեղում, էջ 346։

34 Նույն տեղում։ Ինչպես հայտնի է, ամբողջ Իսպանիան նվաճվեց Հռոմի կողմից Օգոստոս կայսեր (մ. թ. ա. 27—մ. թ. 14 թթ.) օրոք և ստացավ „Hispania Terraconensis" անվանումը։

ամենայն արևմտից և ծովու», Խորենացին տեղյակ էր, որ փյունիկյան (մ. թ. ա. 264—241, 218—201, 149—146 թթ.), մակեդոնական, հատկապես II (մ. թ. ա. 200—197 թթ.) և III (մ. թ. ա. 171—168 թթ.) և սիրիական (մ. թ. ա. 192—188 թթ.) պատերազմները Հռոմի օգտին են եղել։ Մասնավորապես նա պետք է իմանար նաև Անտիոքոս III-ի (մ. թ. ա. 223—187) պարտության մասին Մագնեսիայի մոտ (մ. թ. ա. 190), որին նախորդել էր Հռոմեացիներին դաշնակից հույների նավատորմի հաղթանակը ծովի վրա։ Մ. թ. ա. 187 թ. դեպի Կրետե կղզին հռոմեական նավատորմի կատարած ռազմարշավը նույնպես հաջողությամբ է ավարտվում[35]։ Իսկ դրանից մեկ տարի առաջ հռոմեական հրամանատար Գնեյոս Մանիլիոս Վոլտոնը ջախջախում է գաղատներին-կելտերին[36]։ Մ. թ. ա. 183—166 թթ. Գաղատիային տիրեց Հռոմին դաշնակից Պերգամոնի թագավորությունը[37] (մ. թ. ա. 283—133 թթ.), որը դրա հետ մեկտեղ տիրելով Անտիոքոս III-ի փոքրասիական տիրույթների մի մասին, «դարձավ մեծ պետություն, բայց փաստորեն կորցրեց իր անկախությունը, դառնալով Հռոմի հլու գործիքը»[38]։

Մ. թ. ա. 166—25 թթ. Գաղատիան, գտնվելով հռոմեական ազդեցության տակ, միայն ձևականորեն էր անկախ, իսկ ապա վերածվեց հռոմեական պրովինցիայի, Անկիրա կենտրոնով։

Այսպիսով, Խորենացու հաղորդումը հաստատվում է այն փաստերով, որոնք ցույց են տալիս, որ Հռոմը մ. թ. ա. II դարում արդեն հզոր ուժ էր ներկայացնում և սկսել էր իրագործել իր աշխարհակալ ծրագրերը։

Խորենացու աշխատությունում Դեմետրիոս II Նիկատորի հետ կապված հիշատակվում է. «...և որդւոյն Դեմետրեայ Անտիգոնեայ...»[39]։

Հելլենիստական ժամանակաշրջանում այդ անուններով հայր և որդի մի քանիսն են։ Անտիգոնյաններից կարելի է նշել Դեմետրիոս I Պոլիորկետեսին (մ. թ. ա. 294—283) և նրա որդի Անտիգոնոս II Գոնատեսին (մ. թ. ա. 283—239), ապա որոշ վերապահությամբ Դեմետրիոս II-ին (մ. թ. ա. 239—229) և նրան ժառանգած հորեղբորորդի Անտիգոնոս III Դոսոնին[40] (մ. թ. ա. 229—220), որի հոր անունը նույնպես Դեմետրիոս էր (մ. թ. ա. 286—մոտ. 258) և որը Անտիգոնոս II-ի եղբայրն էր։ Մյուս զույգը՝ Սելևկյան Դեմետրիոս I Սոտերը (մ. թ. ա. 162—150) և նրա որդի Անտիգոնոսն է, որը Դեմետրիոս II Նիկատորի և Անտիոքոս VII Սիդետի եղբայրն էր։ Կարելի է նկատել, որ նկարագրվող ժամանակաշրջանին (Դեմետրիոս II Նիկատորին վերաբերող) ավելի մոտ է կանգնած Դեմետրիոս I Սոտերի որդի Անտիգոնոսը։

Դեմետրիոս I Սոտերի մ. թ. ա. 150 թ. սպանվելուց հետո Ասորիքի և Բաբելոնի թագավոր է դառնում Ալեքսանդր Բալասը։ Անտիոքում, նրա բացա-

---

35 Т. Моммзен, История Рима, т. I, М., 1936, էջ 704։

36 Նույն տեղում, էջ 701։

37 Նշենք, որ Պերգամոնի թագավորությունը Մովսես Խորենացուն հայտնի էր որպես «զթագաւորութիւնն Ասիացւոց»։ Այս բացատրվում է նրանով, որ, ըստ երևույթին, հայկական աղբյուրներին ավանդաբար անցել է «Աշուվա» խեթական նահանգի «Ասիա» անվանաձևը։ Ի դեպ, հենց Պերգամոնի թագավորությունը վերածվում է «պրովինցիա Ասիայի»։

38 А. Б Ранович, Эллинизм и его историческая роль, Л., 1950, էջ 126։

39 Մովսես Խորենացի, Բ, բ, էջ 103։

40 Մ. թ. ա. 221 թ. Սելևսիայի մոտ նա ջախջախեց Սպարտայի թագավոր Կլեոմեն Գ-ին։

կայության ժամանակ, իշխանությունը գտնվում էր Դիոդոտոսի և Հիերաքսի ձեռքում։ Դեմետրիոս I Սոտերի որդիներից Ասորիքում մնացել էր միայն Անտիգոնոսը, որին նրանք սպանեցին[41]։ Ենթադրվում է, որ նա Դեմետրիոսի և Անտիոքոսի սվագ եղբայրն էր, քանի որ Սելևկյան հարստությունում հոր անունը սովորաբար ժառանգում էր երկրորդ որդին[42]։ Ինչպես տեսնում ենք, այս Անտիգոնոսը սպանվել է մի քանի տարի ավելի շուտ, քան Խորենացին նմանօրինակ անունով մեկին մասնակից է դարձնում նշված անցքերին։ Կարծում ենք, որ Մովսես Խորենացին այլ Դեմետրիոսի և Անտիգոնոսի է հիշատակում Դեմետրիոս II Նիկատորի անվան առնչությամբ։ Վերոհիշյալ անձնավորություններից առավել աչքի ընկնողներն են Դեմետրիոս Պոլիորկետեսը և Անտիգոնոս Գոնատեսը, որոնցից առաջինը, որոշ հաջողություններ ունենալով փոքրասիական շրջանների վրա արշավելիս, երազում էր նվաճումներ կատարել Արևելքում[43], հույս ունենալով հասնել Մեդիա՝ Հայաստանի վրայով[44]։ Սակայն անհաջողության մատնվելով հանձնվում է Սելևկոս I Նիկատորին[45] (մ. թ. ա. մոտ. 356—280)։ Իսկ երկրորդը, մի շարք իրադարձություններից հետո[46], Անտիոքոս I-ի հետ դաշինք կնքեց, համաձայն որի Անտիոքոսը չպետք է ներխուժեր թրակիա-մակեդոնական սահմանից արևմուտք (այսինքն՝ Մակեդոնիա և Հունաստան), իսկ Անտիգոնոսը՝ այս սահմանից արևելք[47]։ Անտիգոնոս Գոնատեսին չհաջողվեց Արևելքում նվաճումներ կատարել, սակայն նրա կնքած սահմանային պայմանագիրը, ինչպես նշում է Վ. Տառնը, հանդիսանալով հելլենիստական քաղաքականության հանգուցային կետը, բավական ժամանակ գոյատևեց[48]։ Առավել հաջողության է հասնում Անտիգոնոսը Մակեդոնիայում, ուր մ. թ. ա. 277 թ. Լիսիմաքեայի մոտ ջախջախում է գալատներին, որից հետո նա դառնում է Մակեդոնիայի թագավոր[49]։ Նրա անվան հետ է կապվում Քրեմոնյան պատերազմը (267—262)։ Մ. թ. ա. 262 թ. Աթենքին հաղթելուց հետո Անտիգոնոսը ավերեց Ատտիկան, իսկ Սպարտական միությունը քայքայվեց. ինքը՝ Անտիգոնոսը «դարձավ համարյա ամբողջ Հելլադայի տերը և կարող էր վարել լայն արտաքին քաղաքականություն։ Նա կոալիցիայի մեջ է մտնում Պտղոմեոսի դեմ սիրիական երկրորդ պատերազմում։ Նրա նավատորմը հաղթանակ է տանում Պտղոմեոսի նավատորմի նկատմամբ Կոսի մոտ»[50]։

---

41 „The Cambridge Ancient History", vol. VIII. Rome and the Mediterranean (218—133 B. C.), Cambridge, 1930, էջ 523։

42 Նույն տեղում, էջ 523, ծան. 1։ Այստեղ նշվում է նաև, որ Անտիգոնյանների թագավորական անունների (Դեմետրիոս և Անտիգոնոս) ընդօրինակումը Սելևկյանների կողմից բացատրվում էր վերջիններիս ձգտումով ցույց տալ, որ իրենք արյունակից էին Անտիգոնյաններին և նրանց ժառանգությանը տեր դառնալու իրավունքն ունեին։

43 А. Б. Ранович. Նշվ. աշխ., էջ 93։

44 „The Cambridge Ancient History", vol. VII. The Hellenistic Monarchies and the Rise of Rome, Cambridge, 1964, էջ 88։

45 Նույն տեղում։ Տե՛ս նաև՝ Եվսեբիոս Կեսարացի, հատ. 1, էջ 63։ Հմմտ. «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 28—29։

46 „The Cambridge Ancient History", vol. VII, էջ 100։

47 Տե՛ս նույն տեղում։

48 Նույն տեղում, էջ 101։

49 Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 106—108։

50 А. Б. Ранович. Նշվ. աշխ., էջ 235։

Մեր ենթադրությունը, որ Խորենացու աշխատությունում հիշատակվածներն են Դեմետրիոս Պոլիորկետեսը և Անտիգոնոս Գոնատեսը, հիմքեր է ստանում, եթե հիշենք Եվսեբիոսի աշխատության «Թեռաղացտոց թագաւորք» շարքում բերվող փաստերի մեջ «ի Դեմետրեայ որդոյ Անտիգոնեայ»[51] արտահայտությունը։ Այնպես որ, Խորենացին կամ ավելի շուտ նրա գրիչներից որևէ մեկը, Եվսեբիոսի աշխատությունից կամ այլ աղբյուրներից ծանոթ լինելով այդ երկու աչքի ընկնող մակեդոնական թագավորներին, նրանց անունները ներմուծել է «Պատմութիւն Հայոցի» այդ հատվածի մեջ։

Զափազանց հետաքրքիր են Խորենացու հաղորդած տեղեկությունները տերիտորիալ հարցերի մասին։ Դրանց մի մասը պետք է վերաբերի Միհրդատ I-ի ժամանակաշրջանին։ «ԶԱրշակ Մեծ, արքայ... Պարթևաց, որ և ազգաւ իսկ Պարթև... թագաւորեալ ի վերայ ամենայն Արևելից[52] և Ասորեստանեայց... մինչև ի տեղին՝ ուր Կաւկաս յարևմտեանն յանգի ի ծով...»[53]։ Այս հատվածը ավելի պարզ է դառնում, եթե համեմատենք Հուստինոսի հետևյալ հաղորդման հետ. «Պատերազմ սկսվեց պարթևների և մեդացիների միջև։ Հաղթանակը փոփոխական էր, սակայն վերջնական հաղթանակին հասան պարթևները։ Այդպիսով, ավելացնելով իր ուժերը, Միհրդատը Մեդիայի կառավարիչ նշանակեց Բակասիսին (Bacasis)[54], իսկ ինքը ուղևորվեց Հիրկանիա։ Այնտեղից վերադառնալով, նա պատերազմի մեջ մտավ էլիմեացիների թագավորի հետ, որին հաղթեց և իր թագավորությանը միացրեց նաև այս ցեղը և, իր իշխանությանը ենթարկելով բազմաթիվ ժողովուրդներ, պարթևների գերիշխանությունը տարածեց Կովկասյան լեռներից մինչև Եփրատ գետը (a monte Caucaso... ad flumen Euphratem...)։ Հանկարծակի հիվանդանալով, նա մահացավ, ծերության ժամանակ հասնելով ոչ պակաս փառքի, քան իր նախապապ Արշակը»[55]։

Ինչպես հայտնի է, Միհրդատ I-ը ամբողջ Մեդիան նվաճում է մ. թ. ա. մոտ 147 թ.[56]։ Պարթևական թագավորության մայրաքաղաքը դառնում է Էկբատանան։ Հուստինոսը, հիշատակելով Կովկասյան լեռները, նկատի ունի այժմյան Հինդու-Քուշի[57] և դրանցից դեպի արևմուտք ձգված լեռները։ Դրանց մասին տեղեկություն կա նաև Ստրաբոնի մոտ. «...Հնդկաստանի հյուսիսային շրջանները Կովկասյան լեռների մոտ»[58]։ Այնպես որ, Հուստինոսը Միհրդատ I-ի թագավորության առավելագույն սահմանները ճիշտ է նշում և դրա արտացոլումն է Մովսես Խորենացու աշխատությունից մեր վերը բերած հատվածը։

---

51 Եվսեբիոս Կեսարացի, հատ. I, էջ 160։

52 Պետք է հասկանալ ոչ թե ընդհանրապես ամբողջ Առաջավոր Ասիան, այլ Իրանական աշխարհը և նրան հարակից շրջանները, քանի որ Արևելք ասելով՝ Մովսես Խորենացին տվյալ հատվածում, ամենայն հավանականությամբ, նկատի ուներ Հայաստանից արևելք ընկած երկրամասերը։

53 Մովսես Խորենացի, Ա, ը, էջ 28—29։

54 Դրամագիտական հետազոտությունները Գ. Կոշելենկոյին հանգեցրել են այն եզրակացության, որ միաժամանակ անց «պարթևական սատրապ Բակասիսը ձգտում էր որոշ ինքնավարություն ձեռք բերել «Միհրդատ Ա-ի կենտրոնական իշխանությունից» (Г. А. Кошеленко, նշվ. աշխ., էջ 99)։

55 Justini Historiarum ex Trogo Pompeio, Parisiis, 1818, XLI. 6, 6—9.

56 Г. А. Кошеленко, նշվ. աշխ., էջ 98։

57 Страбон, География, перев., статья и комментарии Г. А. Стратановского, М., 1964, էջ 798, ծան. 1։

58 Strabo, II, 1, 2. տե՛ս նաև՝ նույն տեղում, XV, 1, 56։

Պետք է ենթադրել, որ Կովկասյան լեռները (որոնք վերջանում են Կասպից ծովի մոտ) նշելով որպես սահման, նկատի են առնվել նաև այժմյան Կոպետ-Դաղի և Էլբուրսի լեռները, որոնք կարող էին դիտվել որպես Հնդկական Կովկասի շարունակություն։

Առավել հետաքրքիր է, որ Խորենացին, խոսելով «Արշակ Մեծի» մասին, բերում է տեղեկություններ, որոնք իրականում վերաբերում են Դարեհ I-ի (մ. թ. ա. 522—486 թթ.) աշխարհակալ տերությանը. «Զ Արշակ Մեծ, արքայ Պարսից և Պարթևաց...[59] Հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ... յարևմտեայ Ասորւոց և զՊաղեստին և զԱսիա[60] և զամենայն Միջերկրեայս և զԹետալիա[61], ի ծովէն Պոնտոսի...»[62] մինչև Հնդկաստան[63] (որը նույնպես բխում է կոնտեքստից)։

Այն, որ այս հատվածում[64] Խորենացին նշում է Դարեհ I-ի պետության գրաված տերիտորիայի հիմնական մասը, երևում է նրա հետևյալ հաղորդումից. «Արշակ (իմա՝ Դարեհ I-ը—է. Դ.) տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն, որ յաղագս բաժանելոյ զբոլոր երկիրս երիս մասունս, և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Լիբէ, և զոմն Ասիայ, որում և տիրեաց Արշակ»[65]։

Ինչպես հայտնի է, Հերոդոտի աշխատությունը, Բեհիստունյան արձանագրությունից հետո, այն հիմնական գրավոր աղբյուրն է, ուր տեղեկություններ են պահպանվել Դարեհ I-ի աշխարհակալ տերության մասին։ Հերոդոտը Դարեհ I-ի կապակցությամբ, այլ տեղեկությունների հետ միասին, չորրորդ գրքում հաղորդում է. «Ասիայի մեծ մասը հայտնի դարձավ Դարեհի օրոք»[66]։

Համոզված ենք, որ Մովսես Խորենացին, Ասիայի տեր համարելով Արշակին, այդ մասին նյութ է քաղել Հերոդոտի աշխատության՝ Դարեհ I-ին վերաբերող հատվածներից։ Այլ բան չի էլ կարելի ենթադրել, քանի որ եթե Խորենացին «Արշակ Մեծի» վերաբերյալ նյութ է քաղում Հերոդոտից[67], ուրեմն նա պետք է տեղեկություններ հաղորդի Աքեմենյանների և, մասնավորապես, Դարեհ I-ի վերաբերյալ, քանի որ Հերոդոտի «Պատմության» մեջ նկարագրվող

59 Անունը և տիտղոսը նշում ենք վերապահությամբ։

60 Հմմտ. «Թագաւորութիւնն Ասիացւոց»։

61 Ստ. Մալխասյանը ճիշտ նշում է, որ «Թետալիա անունով մեր հին հեղինակները նշանակում են Բակտրիան իր շրջակա երկրներով»։ Այն դիտելով Վաղարշակի առնչությամբ, համարում է նրա իշխանության տակ գտնվող տերիտորիայից ընկած շատ հեռու դեպի արևելք (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն. Երևան, 1961, էջ 366, ծան. 24)։ Սակայն, եթե այս հատվածը մենք կապում ենք ոչ թե Վաղարշակի, այլ, ինչպես բխում է աշխարհագրական նկարագրությունից Աքեմենյանների կամ պարթևների (Միհրդատ Ա-ը մինչ քոչվորների հարձակումը Բակտրիայի վրա էվկրատիդի թուլացող թագավորությունից որոշ օգուտ քաղեց. տես՝ Just., XLI; М. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 188) հետ, ապա Թետալիան այստեղ նշվում է որպես Իրանական պետության ծայր արևելյան սահմանային երկրամաս։

62 Մովսես Խորենացի, Ա, ը, էջ 28—29։

63 Տե՛ս Աքեմենյանների պետության քարտեզը (М. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 90—91)։

64 Այն չի կարող վերաբերել Որոդես II-ին (մ. թ. ա. 57—37 թթ.), քանի որ նրա և որդու՝ Բակուրի հաջողությունները արևմուտքում չնայած մեծ, բայց կարճատև էին (տե՛ս М. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 214—215)։

65 Մովսես Խորենացի, Բ, բ, էջ 104։

66 Herod., IV, 44.

67 Ամենայն հավանականությամբ Մովսես Խորենացին Հերոդոտին այստեղ վկայակոչում է ոչ միայն նրա համար, որ բերի ցամաքի բաժանումը ըստ նրա։

ժամանակաշրջանի սահմանները միայն այդ են թելադրում։ Կարծում ենք, որ Աքեմենյաններին վերաբերող տեղեկությունները պարթև Արշակունիներին վերագրելը վերջիններիս ամեն կերպ բարձրացնելու Խորենացու ձգտման հետևանք էր, քանի որ նրանցից էին սերում նաև հայ Արշակունիները։

Հաջորդ թագավորը, որ թաքնված է Արշակ Մեծի կերպարի տակ, Հրահատ II-ն է (մ. թ. ա. 138—128 թթ.)։ Նրան վերաբերող անցքերը Մովսես Խորենացին նկարագրում է հետևյալ կերպ. «Այլ իմացեալ եղբօր նորին (Դեմետրիոսի—Է. Դ.) Սիդիացւոյ Անտիոքայ զգնալն Արշակայ՝ գայ ունի զԱսորիս։ Իսկ Արշակայ երկոտասան բիւրու անդրէն դարձեալ, և Անտիոքոս ի սաստիկ ձմերայնւոյն հերքեալ՝ պատահի նմա պատերազմաւ յանձուկ տեղիս, և կորնչի հանդերձ զօրքն»[68]։

Ինչպես հայտնի է, երբ Հրահատ II-ը զբաղված էր իր պետության արևելյան սահմանների պահպանությամբ, Սելևկյանները վերջին փորձը կատարեցին վերականգնելու իրենց գերիշխանությունը Իրանում[69]։ Անտիոքոս VII Սիդետը (մ. թ. ա. 139/8—129 թթ.) մ. թ. ա. 130 թ. (ըստ երևույթին երկրորդ կեսին) արշավեց պարթևների դեմ։ Նա նվաճեց Միջագետքը և ներխուժեց Մեդիա։ Ապա, ինչպես հաղորդում է Հուստինոսը, ձմռանը նրա զորքը՝ մանր ջոկատների բաժանված, տեղավորվեց տարբեր բնակատեղիներում[70]։ Մովսես Խորենացին Անտիոքոս VII-ի արշավանքի ողբերգական ավարտը նշում է «յանձուկ տեղիս», այսինքն ինչ-որ լեռնային վայրում, որը, ըստ երևույթին, պետք է լիներ Մեդիայում։ Սակայն նախորդ հատվածում, որը, թերևս, նույնպես Հրահատ II-ին է վերաբերում, Խորենացին գրում է. «Արշակ Մեծ... սպանեալ զԱնտիոքոս թագաւոր ի Նինուէ»։ Նինվեն, որպես վայր, ամենևին կապ չունի Անտիոքոս VII-ի սպանության հետ[71]։

Արշակ Մեծի կերպարի հետ կարող է կապվել նաև Միհրդատ II-ի (մ. թ. ա. մոտ 123—87 թթ.) անձնավորությունը. «ԶԱրշակ Մեծ, արքայ Պարսից և Պարթևաց, որ և աղգաւ իսկ Պարթև... թագաւորեալ ի վերայ ամենայն Արևելից և Ասորեստանեայց»[72]։

«Արքայ Պարսից և Պարթևաց» արտահայտությունը տվյալ ենթատեքստում որոշ չափով պարունակում է «արքայից-արքա» տիտղոսի իմաստը.

---

68 Մովսես Խորենացի, Ա, բ, էջ 103—104։ Հմմտ. Եվսեբիոս Կեսարացի, հատ. 1, էջ 166—167։

69 М. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 185։ Տե՛ս նաև՝ Р. Фрай, նշվ. աշխ., էջ 251։

70 Just., XXXVIII, 10։ Ըստ Դիոդորոսի (Diod., XXXIV—XXXV, 15) Հրահատ մ. թ. ա. 129 թ. գարնանը բանակցություններ սկսեց Անտիոքոսի հետ (տե՛ս «Вестник древней истории», 1955, № 1, էջ 313, ծան. 3)։ Հրահատ Բ-ի և Անտիոքոս Է-ի պայքարին մանրամասն անդրադարձել է Մ. Մ. Դյակոնովը (տե՛ս М. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 185)։

71 Չի բացառված, որ Նինվեի հիշատակությունը պայմանավորված էր Կիաքսարի և նրա գաշնակիցների կողմից Նինվեի կործանման և Ասորեստանի թագավոր Սինշարիշկունի ինքնասպանության մասին եղած հեռավոր արձագանքներով։

Այս վերջին հատվածում կարող էր արտացոլված լինել նաև Անտիոքոս III-ի պարտությունը մ. թ. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում, որը, ինչպես հայտնի է, շրջադարձային էր Առաջավոր Ասիայի երկրների համար։ Եվ Խորենացին, թերևս իմանալով Անտիոքոս III-ի մասին, վերջինիս պարտությունը վիպականորեն կապում է վաղուց գոյություն չունեցող Նինվեի հետ։

72 Մովսես Խորենացի, Ա, ը, էջ 28։

որը, ինչպես նշում է Ռ. Ֆրայը[73], առաջինը դրամների վրա օգտագործեց Միհրդատ II-ը (մ. թ. ա. 123—87 թթ.)։ Բնական է, որ Միհրդատ I-ին չի վերաբերում «արքայ Պարսից» տիտղոսը, քանի որ նրա ժամանակ նվաճվեցին միայն Հունա-բակտրիական թագավորության երկու նահանգները, Մեդիան, Բաբելոնը և Էլամը[74]։

Այդ նույն տիտղոսի բանաձևը հետևյալ տողերի առնչությամբ համապատասխանում է նաև Վաղարշ I-ին (51—80 թթ.). «ԶԱրշակ Մեծ արքայ Պարսից և Պարթևաց, որ և ազգաւ իսկ Պարթև... թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց, պատեհ համարեալ այսպէս իմն անշարժ իւրոյ թագաւորութեանն մնալ։ Եւ քաղաք զթագաւորութեան տայ նմա զՄծբին... և զԱտրպատական»[75]։ Չպետք է կարծել, թե այստեղ խոսքը մ. թ. ա. II դարի մասին է։

Չափազանց հետաքրքիր կարծիք է հայտնել Ս. Տ. Երեմյանը տվյալ դրվագում հիշատակվող Արշակ Մեծ-ի վերաբերյալ. «Մծբինում Տրդատ Արշակունու թագավորությունը արտացոլվել է նաև հայկական ավանդություններում, որոնք Մովսես Խորենացին անվանում է «զրոյց պատմութեան»։ Նրա և Սեբեոսի հավաքած զրույցներում Արշակունիների հարստության հիմնադիրը (Հայաստանում—է. Դ.) մերթ կոչվում է իր եղբոր՝ Վաղարշ Ա-ի անունով՝ «Վաղարշակ», մերթ՝ «Արշակ Փոքր», իսկ Վաղարշ Ա-ը հիշատակվում է իր դինաստիական «Արշակ Մեծ» անունով... Անշուշտ, Մծբինը Տրդատ Ա-ի մայրաքաղաքը չդարձավ, այլ միայն ժամանակավոր կայան էր մինչև Մեծ Հայքի ազատագրումը հռոմեական նվաճողներից։

Այստեղ ուշագրավ է բնագրի շարունակությունը, որը բացակայում է հռոմեական պատմիչների մոտ։ Այդ այն է, որ Տրդատը թագավորում էր Մեծ Հայքում ոչ միայն նրա համար, որ հայկական գահը դառնա պարթևական

---

73 Ռ. Ֆրայ, նշվ. աշխ., էջ 251—252։ Հայտնի է, որ «Արքայից արքա» տիտղոսը ընդունեց նաև Տիգրան II-ը (N. Debevoise, A Political History of Parthia. Chicago, 1938, էջ 51։ Տե՛ս նաև՝ „История СССР", т, I. М., 1966, էջ 197։

74 Գ. Ա. Կոշելենկո, նշվ. աշխ., էջ 79։ Անհրաժեշտ ենք գտնում նշելու, որ հատկապես Միհրդատ II-ից սկսած Արշակունիների թագավորությունը զբաղեցնում էր արդեն այն տարածքը, որը մ. թ. ա. I դարի վերջում նկարագրում է Իսիդոր Քարակացին, նշելով, որ Զևգմայից՝ Ἄχρι τουτου (Արաքոսիայի Ալեքսանդրապոլիս քաղաքը—է. Դ.) ἐστιν ἡ τῶν Παρθῶν ἐπικρατεια («Մինչև այստեղ է տարածվում պարթևների գերիշխանությունը», Isid., XIX)։

75 Մովսես Խորենացի, Ա, ը, էջ 28—29։ Ասողիկը նույն անցքերի մասին գրում է. «Յայնմ ժամանակի Արշակ Մեծ թոռն Արշակայ Քաջի թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց։ Թողու ի նա և զամենայն աշխարհս արևմտից, որ ընդ ձեռամբ նորա իշխանութեանն էին հնազանդեալք և ինքն չուեալ գնաց ի Բահլ» («Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 30)։ Հայտնի է, որ Ասողիկը Պարթևական թագավորության պատմությանը վերաբերող հարցերում հետևում է Խորենացուն, որոշ դեպքերում նույնիսկ բառացի կրկնելով նրան։ Այս հատվածում նույնպես հետևում է Խորենացուն, սակայն ի տարբերություն վերջինիս նա Վաղարշակին թագավորեցնող Արշակ Մեծին ներկայացնում է որպես Արշակ Քաջի թոռը։ Իհարկե, քանի որ այս անցքերը կապվում են Վաղարշ I-ի հետ, նա ոչ թե Արշակ Քաջի (իմա՝ Արշակ Ա-ի) թոռն էր, այլ մի քանի սերունդ հեռու էր կանգնած նրանից։ Ինչևիցե, դրական է, որ Ասողիկը այստեղ տարբեր անձեր է համարում Արշակ Քաջին և Արշակ Մեծին։ Կարծում ենք, որ այս հատվածում Ասողիկը նույնպես հետևում է Խորենացուն, չնայած որ վերջինիս մեզ հայտնի տեքստում այդ տարբերակումը չկա, բայց այն կարող էր լինել Խորենացու բնագրում և ավելի վաղ ձեռագրերում, որոնցից կարող էր օգտված լինել Ասողիկը։

դինաստիայի ժառանգական սեփականություն, այլև Հայաստանի հարցը միջոց էր այն ավելի մեծ նպատակների հասնելու համար, որ առաջին անգամ արտահայտել էր Արտավան Գ-ը[76]։ Այդ նպատակն էր՝ Արևմուտքում վերականգնել աքեմենյան ժամանակաշրջանի տերիտորիան։ Այս էր պարթև Արշակունիների կրտսեր ճյուղի քաղաքական ծրագիրը, որին, սակայն, երբեք վիճակված չի եղել իրականանալու»[77]։

Անհրաժեշտ է նշել, որ տերիտորիալ առումով, բացի Մծբինից, Վաղարշակի (իմա՝ Տրդատ I-ի) ժամանակաշրջանին է վերաբերում նաև Ատրպատականի մասին վերոբերյալ հիշատակությունը։

Ս. Տ. Երեմյանը գրում է. «Ինչպես Արշակ-Սանատրուկի ժամանակ, այժմ ևս Մծբինը ժամանակավորապես դառնում է Հայաստանի Հռոմից շնվաճված մասի մայրաքաղաք։ Մի այլ հենակետ Տրդատը պիտի ունենար Ատրպատականում, որտեղ թագավոր էր իր եղբայր Բակուրը։ Այստեղ Վաղարշ Ա-ը Հայաստանի թագավոր նշանակված Տրդատին, իբրև «ձեռական իշխանութեան երկիր» հանձնում է Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիս-արևելյան ափերին գտնվող երկրամասը, որտեղ և քաշվում է Տրդատը, երբ Կորբուլոնը գրավում է Արտաշատը։ Այս երկրամասը Փավստոս Բուզանդի մոտ հայտնի է իբրև «ձեռին իշխանութեան տունն թագաւորին Հայոց, որ է զԱտրպատական աշխարհան»[78], որը մի այլ տեղ Փավստոսը (Ե. ը.) անվանում է «Ատրպատճաց գաւառ»[79]։ Ս. Տ. Երեմյանը նշում է նաև, որ այդ երկրամասը Թավրիզից և Սոհունդ գագաթից դեպի արևմուտք մինչև Կապուտան լիճը ձգվող տափարակ տերիտորիան էր[80]։

Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները ըստ ժամանակագրական կարգի տարազատելով՝ հնարավոր է լինում Արշակ անվան տակ[81] տեսնել մի շարք իրանական գահակալների, որոնց առնչությամբ լուսաբանվում են նաև հին աշխարհի այլ պատմական դեպքեր և դեմքեր։

Այսպիսով, քննարկված հատվածներում ուրվագծվում են Աքեմենյան Դարեհ I-ի (մ. թ. ա. 522—486), Սելևկյաններ Դեմետրիոս II Նիկատորի (մ. թ. ա. 146—125) և Անտիոքոս VII Սիդետի (մ. թ. ա. 139/8—129), Արշակունիներ Արշակ I-ի (մ. թ. ա. մոտ 247—217), Միհրդատ I-ի (մ. թ. ա. 171—

---

76 Տե՛ս Tacit., Annal., VI, 31. Ինչպես նշում է Ս. Տ. Երեմյանը, «այս ծրագրի իրագործման նպատակով նա (Արտավան III-ը—Է. Դ.) ներխուժեց հռոմեական պրովինցիա Կապադովկիա, իսկ Մեծ Հայք ուղարկեց իր ավագ որդուն՝ թագաժառանգ Արշակին, որի անունը, ըստ հայկական ավանդությունների, թերևս Սանատրուկ էր։ ...Սանատրուկ թագավորի մասին բերվող տեղեկությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հաստատվում են Հովսեպոս Փլավիոսի տեղեկություններով և հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Սանատրուկի մայրաքաղաքն է եղել Մծբին քաղաքը» («Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Երևան, 1971, էջ 714)։

77 Նույն տեղում, էջ 746։

78 Նույն տեղում, էջ 743 և ծան. 37։

79 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 175։

80 Ս. Տ. Երեմյան, Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում. «Ձեռական իշխանությունը» հին Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 5։

81 Ի դեպ, այլ պատմիչները նույնպես պարթևական թագավորներին ներկայացնում են Արշակ անունով (տե՛ս, օրինակ, Diod. XXXIII, 18, XXXIV/XXXV, 15).

138), Հրահատ II-ի (մ. թ. ա. 138—128), Միհրդատ II-ի (մոտ. մ. թ. ա. 123—87) և Վաղարշ I-ի (51—80 թթ.). Հայոց թագավոր Վաղարշակի (թմա՝ Տրդատ I-ի. 63—88) հետ կապված անցքերը։

НЕКОТОРЫЕ ЭПИЗОДЫ ИСТОРИИ ПАРФЯНСКОГО ГОСУДАРСТВА В ОСВЕЩЕНИИ МОВСЕСА ХОРЕНАЦИ

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

События, описываемые в исследуемых отрывках «Истории Армении» Мовсеса Хоренаци, являются одними из основных в истории Парфянского государства соответствующих периодов. Хоренаци относит время царствования первого парфянского царя, в одном случае называя его Аршаком Храбрым, в другом — Аршаком Великим, к 250—219 гг. до н. э.

Ко времени царствования Митридата I (171—138 гг. до н. э.), по-видимому, относится сообщение Хоренаци о том, что Аршак Храбрый отправляет к римлянам послов «с предложением о заключении союза с тем, чтобы они отказались помогать Македонянам; (сам же) соглашается не дань платить Римлянам, а посылать (им) ежегодно дары на сто канкаров» (II.2, пер. Н. Эмина). Оно следует за сообщением о возвышении Рима, из чего видны экспансия в Испании, в частности овладение Римом золотыми и медными рудниками, а в Малой Азии—обложение налогами Галатии и Пергамского царства. Римская империя на Востоке к середине II в. до н. э. уже представляла собой реальную политическую силу и ею хотел заручиться Митридат I, вынужденный вести борьбу, как отмечает Р. Фрай, на двух фронтах—против Деметрия II Никатора и Гелиокла Бактрийского, которые, как полагает В. Тарн и как видно из одного сообщения Юстина (XXXVI. 1.4), заключили военный союз. Шаг, предпринятый Митридатом I по отношению к Риму, по всей вероятности, оправдал себя, так как в декабре 141 г. до н. э. он сумел разгромить Гелиокла, а в 140 или 139 г. до н. э., вернувшись в Вавилонию, разбил селевкидское войско и взял в плен Деметрия.

Упоминание «сына Деметрия Антигона» кажется нам анахронизмом, так как не относится к сыну селевкидского царя Деметрия I Сотера Антигону, который не мог участвовать в войне против Митридата I на стороне своего брата Деметрия II Никатора по той причине, что он до этого был убит в Антиохии.

Хоренаци отмечает, что Аршак Великий царствовал над всем Востоком и Ассирией до Кавказских гор. Это сведение согласуется с сообщением Юстина (XLI. 6.6—9), из которого следует, что Митридат I, подчинив своей власти многие народы, распространил господство парфян от Кавказских гор до реки Евфрат. Здесь речь идет о современном Гиндукуше, горах, находящихся на северо-западе Индии, которые упоминает и Страбон (II. 1. 2; XV. 1. 56).

Историк сообщает также сведения, относящиеся к ахеменидскому времени. Об этом говорит и тот факт, что Хоренаци, сообщив, что Аршак Великий овладел Азией, которая является третьей частью света, ссылается на четвертую книгу Геродота, где описываются события, относящиеся к Дарию I.

Сообщение о разгроме Антиоха VII Сидета (брата Деметрия II Никатора) Аршаком Великим относится к Фраату II (138—128). Хоренаци подчеркивает, что это произошло зимой в каком-то горном проходе; это согласуется с сообщениями Диодора (XXXIV/XXXV.15—17) и Юстина (XXXVIII.10). Говоря об Аршаке Великом, «царе персов и парфян», историк, по-видимому, имеет в виду Митридата II (123—87), который, как считает Р. Фрай, был первым среди носивших титул «царь царей». Хоренаци сообщает, что армянского царя Вагаршака (т. е. Трдата I) возвел на трон в Мцбине (Низибине) Аршак Великий, который, как известно, не кто иной, как парфянский царь Вагарш I (51—80).